23. ԽԵԼԱՑԻ ԱՂՋԻԿ

Կէղի, չէղի մե թագավոր մի կէղի։ Էդ թագավոր կվերցու օր մի ոզիրին կըսա.

— Ոզիր, ես քեզնե մեկ բան մի պրտի ուզիմ։

— Թագավոր սաղ մնա,— կըսե ոզիր,— քու ուղածն ի՞նչ ա, ուզա։

Կըսա.— Իմ ուզած դինա՞ս ինչ ա։ Ես քըզի մեկ օսկի կիտամ։ Կառիս կէրտաս շուկեն, կառնիս ընձի խոչ (խոյ) մի, էն խոչուց կսուկես ընձի շիշ մի քարար։ Էն խոչ լէ պտի սալամաթ էղնի, հեչ մեկ տեղ կըսուր, բրին (պակասություն, վերք) չէղի։ Իմ օսկին լէ ետ կպիրես։ Թե չէ՝ քու գլուխ կզարկիմ։ Քըզի մե ամիս լէ օր կդնիմ։

Էդ ոզիրն էլավ ու մառախով դեպի տուն գնաց, ու շատ մառախ էրեց ու քրպոտավ ու ծիծաղ ի էրես չիկա։

Կնիկ վերուց ըսեց.— Ոզիր, էսօր քու քեֆ վըրեդ չէ, նե կզրուցես, նե կծիծղաս։

Ըսավ.— Կնի՛կ, ի՞նչ զրուցիմ, ի՞նչ ծիծղամ, թագավորն ընձի օսկի մի տվեր ա. կըսա. «Պտի էդ օսկով խոչ մի առնիս, էդ խոչուց շիշ մի քաբաբ շիքիս, խոչ սալամաթ պիրիս, իմ օսկին լէ ետ պիրիս» — ըսավ,— կնիկ, խելք-խելքի վրեն էվել ա, դու ընձի ճամբախ մի խանես։

Ըսավ թե.— Ողիր, ես հեչ էտոր ճամբախ չը կռնամ հանիմ։ Գործ չի կա օր աստված չսուկա, էդ գործ աստված պիտի սուկա։

Ու ոգիրն էր, լուս պացվավ ու հ'ելավ մըչ քաղքին, ու գնաց խելոք մարգերու մոտ։ Ուր դարդ էսոնց լաց. ոչ մի[1] մարդ էդոր դարդին չարա չտեսավ։

Էդ տեխեն ոգիր հ'ելավ կնաց ուրիշ քաղաքներ օլորտավ։ Ոչ մեկ մարդ էդոր դարդին դարման չէրեց։

Հ'ելավ էնպես մառախի մեջ, գնաց տեսավ մեկ պառավ մի ի դուռ կաներ էր։

Ողիր ըսեց.— Բարիրկուն, մայրիկ ջան։

— Բարով էկար, ողիր ջան։

Ոգիր ինք ինք ըսավ. «Ջանըմ, էդ պառավ ի՞նչ դիներ, թե ես ողիր ենք. էսքան տեղ ես ղվռնա, մեկը չդինա իմ էղելուտեն, վալ-լա, իմ գործին թե ճամբախ մի գտնա՝ էս մարդն ա, չգտնա՝ էս մարդն ա։ Էս գիշեր ես էս մարդուն պրտի մըսաֆիր (հյուր) էղիմ։

Ըսավ.— Մայրիկ ջան, կէղի՞ օր ըսօր ես քու տուն մըսաֆիր էղիմ։

Ըսեց.— Ողիր ջան, քի պես ողիր մարդ օր մըսաֆիր էղի, ես ինչպե՞ս չընդունիմ։ Հրամեցի էրտանք տուն։

Ողիր կէրթա պառվու տուն։ Պառավն ա, ուր գորաի ողիրին պատիվ կէնա։ Մնա, մինչի հ'իրկուն, տեսնան օր ողիր նե կծիծղա. ու նե կղրուցա։

Պառավ վերու կըսա.— Ողիր, դլխուտ արևուդ մեռնիմ, էդ քու դարդն ի՞նչ ա, նե դու կղրուցիս, նե կծիծղաս։

Ոգիրն ըսեց թե.— Մայրիկ ջան, իմ դարդ շատ ա։ Թագավոր ընձի տվե մեկ օսկի, ըսե. «Առնիս էրթաս շուկեն, կառնիս ընձի խոշ մի, խոշուց կէնիս մեկ շիշ քաբաբ, խոշ ընձի սաղ սըլամաթ կառնիս կուգաս, մեկ օսկի փարեն լէ ընձի կբերիս»։ Ես լէ շիվա-րեր եմ, շատ տեխրանք լէ օլրրտա, մեկ լէ իմ ցավին դեղ էրող չէղավ։

Պառավն ըսեց.— Մայրիկ կուրբան էղի ոգիրին. ես մտածիմ իտոր ճամբախ մի չկռնամ խանիմ։

Էդ տեխ ոգիր շատ ուր նիաթ էնեց, ուր ումուտ էրկնուց, գետ-նուց կտրեց։

Պառավ վերցուց ըսեց.— Մայրիկ կուրբան էղի ոգիրին, ընձի մեկ ախչիկ մի կա տասնուհինգ տարեկան, թե էնի ճամբախ մի քրղի հանա, թե չէ՝ ոչ մարդ մի քու ցավին օգուտ չունի։

---

1 Մի՝ չիք (Ծ. Ն.)։

Պառավն հ'էլավ ու զախչիկ կանչեց ու ոզիրի մոտ պերեց։

Ըսավ.— Ոզիր, քու ցավ պատմա իմ ախչկան։

Ոզիրն ուր ցավ պատմեց էդ ախչկան։

Ախչիկն ըսաց.— Օսկի մի տանիս շուկեն, կառնիս ընձի սիվտակ պրթով խորոտ անկոտիլ խոշ[1] մի, գիկաս։

Ոզիր դելնի կէրտա շուկեն, օսկի մի կիտա կառնի սիվտակ պրթով անկոտիլ խոշ մի, գիկա։

Պառվու ախչիկ կպերա զէդ խոշու վերևի պուրթ կկտրա, թամիզ մի կլվա, լավ կգզա, բարակ կմանա ու մեկ խորոտիկ շարշափ (ծածկոց) մի կիտա գործել։ Շարշափ օր գործեցին, կիտա ոզիրին կըսա.

— Տար շուկեն տուր մեկ դեղին օսկի։

Ոզիր շարշափ տարավ շուկեն, ծախեց մեկ դեղին օսկու ու դառձավ էկավ պառվու տուն։

Պառվու ախչիկ զէդ խոշու պ.... կխանա, կէնա շիշ մի քաբաբ։ Խոշու բրին կսաղցու։ Խոշ թասլիմ կէնա ոզիրին։

Ոզիր օսկին կդնա ուր ծոց, ուր շիշ քաբաբ կառնե ուր մոտ։

Պառվու ախչիկ կըսա.— Ոզիր, ես քըզնե կխնդրվիմ, թագավոր կըսա թե. «էդի քու խունար չէ, վոն օր էդի քըզի սորվրցուցեր ա, զէտի քըզնե կուզիմ». չէղնի՛, չէղնի դու ընձի ընդոր ձեռքն իտաս։

Ոզիրն ըսեց.— Հա՛, էտի լէ քու լավութե՞ն ա, օր ես հ'ելնիմ թագավորին ըսիմ։

Ոզիրն էր, հ'ելավ, էտոնց մեկ հիսուն օսկի փարա տվեց, շատ լէ շնոզքըլավ ու բարև մնա էղավ, ու հ'ընգավ ճամբախ։

Իտհախսի ոզիր գնաց ուր քաղաք, մտավ թագավորի քոշկ ու սարեն, հ'ընցավ թագավորի հ'օդեն ու թագավորի հ'առեճ կանավ, ըսեց.

— Թագավոր ապրած, քու ուզածներ պիրեցի։

Թագավոր ըսեց.— Հելնինք տեսնինք։

Ոզիր ըսեց.— Հա՛, էդա քու խոշ, էդա քու շիշ քաբաբ՝ էդ խոշուց, իտա լէ քու օսկին։

Թագավոր ըսեց.— Էդի իմա՞լ առար, ընձի կըսա պիտի էնիս։

Ոզիրն ըսեց.— Քու օսկին մեկ սիվտակ խոշ առա, ընդոր պուրթ պիրեցի, կնդեցի, մեկ շարշափ սուկեցի, շարշափ ծախեցի օսկի մի։ Խոշու պ.... հանեցի, շիշ մի քաբաբ էնեցի։ Իդա քու խո՞շ, իդա քու օսկի՞ն, իդա լէ՞ քու շիշ քաբա՞բ։

---

1 Բնագրում ամեն տեղ քոշ (Ս. Կ.)։

— Հա՜, էդի քու մարիֆաթ չէր, իլլահի էն վոն օր քըզի սովըրցուցե, էն մարդ քըզնե զուզիմ, պերիր, պերիր, թե չէ՝ քու գլուխ կղարկիմ։

Ոզիրն էր փոր-փոշման հ՝ելավ ու գնաց պառվու տուն։

— Բարև, մայրիկ.— ըսեց ոզիր։

—Ասսու բարին, ոզիր։

Ոզիր ըսեց.— Մայրիկ, թագավոր դրի վըր ընձի, էս խոշու մերիֆաթ սովըրցող չբերիս[1] ընձի, ես քու գլոխ կղարկիմ։

Ախչիկն էկավ ըսեց.— Ոզի՜ր, տեսա՞ր, դու խըդ ընձի բեբախտ էղար։

Ըսեց.— Ի՞նչ էնիմ, էրի, չէրի, իմ յախեսի չկոցա ազատերի։

— Է, լավ— ըսեց,— դու էրեցիր խըտ ընձի բեբախտուԹուն. ես խըտ քըզի՝ չէնիմ։ Էլի՜ ու խըտ իրարու էրԹանք։

Ոզիր կխանա մեկ քառսուն օսկի կիտա պառվուն, կըսա.

— Մայրի՜կ, էս լէ քըզի, ես ի՞նչ գինամ, թագավորի գործ ա, կէղնի օր քու ախչկան գլոխ մե վողյաթ խանի, չէղի օր անտեր մընաս։

Ոզիրն ու ախչիկն զէլնին խըտ իրարու կընգին ճամբախ ու գիկան։ Գիկան, գիկան կխասնին թագավորի սարի դուռ։ Ոզիր ախչիկ կէցկա մեկ հ՝օդե մի, ինք կէրԹա թագավորին խաբար կիտա։

— Էն մարդն օր ղու ընձնե ուզեցիր, էն մարդն առա էկա։

Թագավոր ըսեց.— Պետք է էն մարդ պերես իմ հ՝առեճ կանգըցուս։

Ոզիր հ՝ելավ ու գնաց էդ ախչկա ձեռ բռնեց ու պերեց թագավորի հ՝առեճ կանգըցուց։

Թագավոր ախչկան ըսեց.— Դու ոզիրին սովըրցուցեր իս հոգըչի մարիֆաթ։

Ախչիկ ըսավ.— Թագավոր ապրած կէնա, ես իմ ըսեր եմ, ինքար չէնիմ (չեմ ուրանար)։

Թագավորն ըսեց.— Օր հըմալ ա, ես քու հ՝առեճ իրեք շարթ կընիմ։ Թե դուն էդ շարթեր ընդունեցիր ու կատարիր, ես զքըզիկ կառնիմ։ Մեկ շարթըն,— ըսավ,— ես քու կուշտ չըմ պառկիմ, դու էրեխով էղնիս, էրեխեն պտի ընձնե էղնի։ Մեկ լէ՝ քիսե մի օսկի կըլնամ, իմ մոհր վրեն կղարկիմ, դու իմ տան ծախս, իմ ասքըրին իդա օսկուց էնիս, էն մոհր չքանդվի ու քիսեն չպատռի։ Մեկ լէ իմ ըստեուճ կսրախ կկապիմ ախոռ ու կերտամ կռիվ, դառնամ իգամ կսրախ փորով տեսնիմ, քուտակն լէ իմ տկի ձիուց էղնի։

---

1 Բնագրում կբերիս (Ս. Կ.)։

Ախչիկն ասավ.— Լավ, իմ ընդունակն է։

Թագավորն էլավ, ասքար էնեց, գնաց կռիվ։ Մի ժամանակ մի մնաց թագավորի կնիկ հ'ելավ ասքար էնեց ու գնաց ուր իրկան հոգ։

Էդ տեխ կնիկ մարգանակ հալավ էր հագիր էր։ Գնաց էն տեխ թագավորի չադրի դիմաց ուր չադրը զարկեց։

Խաբար տվեցին թագավորին, թե հըմալ մախկուլ մարդ մի բըռ մի ասքրով էկի քըզի օգնական։

Էն մախկուլ մարդ հ'ելավ, գնաց թագավորին տեսուտուն։ Դարձավ էկավ, ուր չադրը նստավ։

Լուս պացվավ, էն մախկուլ մարդ (թագավորի կնիկ) էլման գնաց թագավորի չադրը ժըղլի (խոսակցել)։

Թագավոր ասեց թե. —Է՛յ, մարդ սանդրիչ չգինա՞ս խաղաս, մե սանդրիչ խաղանք։

Ասեց. — Գինամ։

Թագավոր ասեց.— Ինչի՞ վրեն խաղանք։

Ասեց.— Մոհրի վըրեն խաղանք։

Թագավորն ու էդ մախկուլ մարդ սանդրիչ խաղցան։

Էդ աղեն ղթագավոր տարավ։ Հ'ելավ զմոհր (կնիք) առավ ու էկավ։ Պերեց զէդ մոհր քանդեց, զօսկիք միջեն հանեց ու էդոր ասքրին ծախս էրեց։ Բերեց թաքրար էն քիսեն կապեց ու էնոր մոհրով մոհրեց։

Էդի մեկ շարթ։

Օլոր օր էլման դնաց թագավորի մոտ, ասեց. —Թագավոր, առ քու մոհր, էլ պետք չունիմ։

Թագավոր ասավ թե.— Չի գա՞ս մեկ լէ սանդրիչ խաղանք։

Ասավ.— Մեր շարթ ընչի՞ վրա էղնի։

Ասավ. —Ես իմ տրեի ձին, դու քու տրկի ձին։

Նստան խաղցան։ Աղեն ղթագավոր տարավ։ Առավ թագավորի ձին ու դնաց ուր չադրը։ Գիշեր թագավորի ձին քաշեց վըր ուր կսրըխուն։

Լուսուն առավ ղթագավորի ձին ու տարավ թագավորի չադրը, թալսիմ էնեց թագավորին, ասեց.

— Դու ձին տվիր ընձի, ես լէ փեշքեշ էնեցի քըզի։

Թագավոր ասավ.— Արի՛, էսօր լէ սանդրիչ խաղանք։

Ասավ.— Խաղա՞նք։

Թագավոր ասավ.— Ինչի՞ վրեն խաղանք։

Ըսավ.— Դըլխոստ (սրտի ուղած) մըր սիրտ ինչ ուղա, ղէն առնինք իրարուց։

Թագավոր լէ ըսեց.— Աղե՛կ։

Էլման սանգրիչ խաղցան։ Թագավոր էլման տարվավ։

— Է,— ըսավ,— պետք ա, ըսօր գուն իգաս ընձի կոնախ։

Առեց ղԹագավոր կնաց ուր չադրը։

Հերի քնելու ժամանակ, էն մախկուլ մարդ հ'ելավ տկլոզցավ։ Հանդե կնիկ։ Թագավոր տարավ ուր կշտին պառկըցուց։

Լուս օր պացվավ, էդ աղեն ըսավ.

— Թագավոր, ըստ հախ էլի գնա, քու չադրը նստի, էս լէ խեոիք էր։

Էդ հախս էդ աղեն էլավ գնաց Թագավորի մոտ, ըսավ.— Թառավոր, իմ իգին տաս օր ես էրթամ։

Թագավորի կնիկ հ'ելավ էկավ ուր տուն։

Թագավոր էն տեխ մե տարի լէ կռիվ էրեց, տարին օր լըմընցավ, էդ Թագավոր ետ դարձավ ու էկավ։

Տառնանք Թագավորի կնկան վրեն։ Ին ամիս օր Թըմավ, Թագավորի կնկան տղեմ էղավ, կսրախին լէ՝ քուռակըմ հ'ելավ։

Թագավորն էկավ ուր քաղքին մոտեցավ. անկչկլա տարան Թագավորին Թե. «Քու կնգան մոտեն տղեմ էղե, քու կսրխուց լէ քուռակ էղե»։

Թագավորն էդ տեխ շատ հերսոտավ, ուր նիաթ էնեց։ Երդում կերավ օր խասելուն քիմի սպանի ղկնիկ լէ, ղկսրախ լէ։

Գնաց հ'ինք ուր նստած հ'օդեն նստավ։

Ողիր, քուբարներ (հարգելի անձեր) էկան էդոր տեսութուն, ու հ'ելան գացին։

Հ'իրկուն էղավ, մութ տվեց։ Թագավորն է, ընկեր մտածմունքի մեջ։ Ինք ուրին կըսա. «Ջանըմ, ես փորձ էնիմ, սորա սպանիմ, Թե չէ՝ առանց փորձի համան սպանիմ»։ Ըսավ. «Վոլլա, ես պտի հ'առեճ փորձ առնիմ, սորա սպանիմ, կարելի է էդ մարդ մեղավոր չի»։

Խանչեց ուր կնիկ ու բերեց ուր մոտ, ըսավ.

— Ես քու հ'առեճ իրեք շարթ դրեցի, մտածա դե, էդ շարթեր ի՞մալ ին։

Կնիկ ըսավ.— Լա՜վ, գինամ իմալ ա, Թագավոր սախ մնա, Թե հրաման տաս՝ ես կհասկցում քըղի մեկիկ, մեկիկ։ Ըսավ.— Թագավոր, էն ժամանակ օր դու հ'ելար գացիր կռվի ես ախչիկ ենք, դու ասիր. «Ես քզի տեսնիմ էրեխով, ընձնե էղնի». մեկ շարթ լէ. «Քիսա օսկին չբացվեր, էնոր օսկուց ասքըրի ծախսն էղեր, մոհր լէ

չքանդվեր»։ Մեկ լէ ըսիր թե. «Իմ կսրախ ըստեղջ ա, թավլեն կկապիմ, ես հ'իգամ տեսնիմ իմ ձին քուռակով էղի, քուռակ իմ ձիուց էղի»։

Թագավոր ըսավ.— Լաո՛, մի շարթ էդ էր։

Թագավորի կնիկ ըստհախ ըսեց,— Թագավոր, էն ժամանակ օր դու գացիր կռիվ, ես լէ իրեք ամսով սորա, հագա մարդանակ շոր, առա ասքար, էկա քըզի օգնութան։ Ես էկա, իմ շագըր քու շադրի դիմաց զարկեցի, էկա քու տեսուտուն. իրեք հեղ սանդրիչ խաղցանք, առաջին խաղցանք մոհրի վրա, մոհր քըզնե տարա՞։

Թագավոր լէ ըսեց.— Տարա՛ր։

Ես տարա քու քիսեն պացի, օսկի խանեցի քու ասքարի վրեն ծախս էրեցի, էրեցի՞։

— Էրեցի՛ր...

Օր հըմալ ա, էդ քու քիսեն, էդ քու մոհր։ Մեկ լէ խաղցանք քու տըկի ձիու վրա։ Քու ձին տարա՞։

— Տարա՛ր։

Էդ հաղ քու ձին քաշեցի քու կսրախի վրեն։ Էդա քուռակն լէ քու ձիուց։ Էդ լէ օղո՞րթ ա։

Թագավորն ըսեց.— Էդ լէ օղո՛րթ ա՛։

Մնաց հ'ետին շարթ, օր դըլխոստի վրեն խաղցանք, ես քըզի տարա՞։

— Տարա՛ր։

— Ես քըզի տարա իմ շագըր։ Տկլոզցա, ես կնիկ ե՞նք, թե մարդ ենք։

— Տու կնիկ էր։

— Տու պառկա՞ր իմ ծոց. էս լէ քու տղեն։

Թագավոր կուրախնա ու հասավ կնկա ճակատ պագեց ու ըսավ.— Մըկա դինամ օր դու շատ իմաստուն իս։

Հ'ելավ յոթն օր, յոթ գիշեր ուր հարսնիք պռնեց, դհոլ ու կուսան զարկեց, ուր կեր ու խումն էրեց ու պսակվավ, ուր մուրազին հասավ։